ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ապրանքների մատակարարման և տեղակայման վերաբերյալ

ք. Երևան 30.03.2018թ.

ՀՀ ԱՆ ,Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲԸ, հետագայում Գնորդ, ի դեմս տնօրեն Ալեքսանդր Բազարչյան մի կողմից, և "ԴԻՎԻ ԳՐՈՒՊ" ՍՊԸ-ն, հետագայում Մատակարար, ի դեմս տնօրեն Դ. Ծիրունյանի մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Մատակարարը պարտավորվում է մատակարարել սույն պայմանագրի հավելված 1-ում նշված ապրանքները, այսուհետ՝ Ապրանքներ կամ Սարքավորումներ, ինչպես նաև կատարել մատակարարված ապրանքների տեղակայման աշխատանքներ, այսուհետ՝ Տեղակայում, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքները, տեղակայման աշխատանքները և վճարել դրա համար, սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

1.2. Ապրանքները անցնում են Գնորդի սեփականությանը դրանց ամբողջ գինը վճարելու պահից:

1.3. Մատակարարը Ապրանքների հետ միասին Գնորդին է հանձնում Ապրանքների հետ կապված բոլոր փաստաթղթերը, օգտագործման տեխ. պահանջները, երաշխիքային կտրոնները (առկայության դեպքում):

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Սույն պայմանագրում Ապրանքների և Տեղեկայման գինը սահմանվում և վճարվում է << դրամով:

2.2. Պայմանագրով նախատեսված Ապրանքների և Տեղակայման ընդհանուր արժեքը կազմում է կից հավելվածի նախնական նախահաշվում նշված գումարը:

2.3. Ապրանքների և կատարված աշխատանքների համար վերջնահաշվարկի և վճարման հիմք են հանդիսանում Գնորդի և Մատակարարի կողմից կնքված ընդունման-հանձման ակտը:

2.4. Ապրանքների և Տեղեկայման գինը վճարվում է՝կանխավճար հավելված 1-ի արժեքի 50%-ի չափով, մնացած 50%-ը վճարվում է ապրանքները և Տեղակայման աշխատանքները Գնորդի կողմից ընդունելուց հետո 15 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

3. Մատակարարման ժամկետը, փոխարկում, հանձնումը

3.1. Ապրանքները Մատակարարը Գնորդին է հանձնում և Տեղակայում կանխավճարի ստացումից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2. Ապրանքները Գնորդին հանձնելուց հետո, Մատակարարման տարածքում, կատարվում են Ապրանքների տեղակայման աշխատանքները:

3.3. Գնորդը իրավունք ունի ստուգել Ապրանքների քանակը, որակը, կոմպլեկտը, սույն պայմանագրի պայմաններին և Ապրանքների սպեցիֆիկացիային համապատասխանությունը Ապրանքների մատակարարման վայր հասցնելու օրվանից սկսած քսանօրյա ժամկետում և

հայտնաբերված անհամապատասխանությունների և թերությունների մասին գրավոր ծանուցել Պատվիրատուին:

3.4. Սույն պայմանագրի 3.3. կետում սահմանված ժամկետում Գնորդի կողմից Ապրանքների որակի, կոմպլեկտի կամ այլ անհամապատասխանություն կամ թաքնված վնասվածք հայտնաբերելու դեպքում Գնորդը այդ մասին գրավոր տեղյակ է պահում Մատակարարին: Նման տեղեկացում ստանալու դեպքում Մատակարարը.

3.4.1. ողջամիտ ժամկետում անհատույց վերացնում է հայտնաբերված թերությունները և անհամապատասխանությունները,

4. Կողմերի պարտավորությունները

4.1. Մատակարարը պարտավորվում է՝

4.1.1. Ապրանքները Գնորդին հանձնել սույն պայմանագրի 3.1 կետում սահմանված ժամկետում:

4.1.2. Ապահովել մատակարարված Ապրանքների որակը, նոր լինելը և լիարժեք կոմպլեկտավորվածությունը,

4.1.3. Պատշաճ կատարել Ապրանքների տեղակայման աշխատանքները:

4.1.4. Կատարել սարքի վերանորոգումը կամ փոխարինումը սարքը արտադրող ֆիրմայում, եթե անսարքությունը հնարավոր չէ վերացնել առանց արտադրող ֆիրմայի միջամտության: Այս դեպքում Մատակարարը տեղեկացնում է Գնորդին, վերոհիշյալի և փոխարինման/վերանորոգման ժամկետների մասին:

4.2. Գնորդը պարտավորվում է՝

4.2.1. ժամանակին ընդունել Ապրանքները ,

4.2.2. ժամանակին կատարել սույն պայմանագրով նախատեսված վճարումները,

4.2.3. Ապահովել սարքավորումների շահագործման նորմալ՝ սարքավորման տեխնիկական փաստաթղթերում նշված պայմանները:

4.2.4. Ապրանքներում բոլոր անսարքություններ առաջանալու դեպքում, ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային նամակով տեղեկացնել այդ մասին Մատակարարին:

4.3. Գնորդի կողմից 4.2.3., 4.2.4. կետերում նշված պարտավորությունների խախտման դեպքում տվյալ սարքը կարող է հանվել երաշխիքային սպասարկումից: Այսպիսի սարքի վերանորոգման կամ փոխարինման հարցը կարգավորվում է լրացուցիչ:

4.4. Վերոհիշյալ կետերում նշված բոլոր աշխատանքները ձևակերպվում են երկկողմանի ակտերով:

5 Ապրանքի երաշխիքը

5.1 Մատակարարը պարտավորվում է ապահովել Ապրանքների բարձր որակը և երաշխավորում է, որ Ապրանքները համապատասխանում են ՀՀ և միջազգային պրակտիկայում գործող ստանդարտներին:

5.2 Ապրանքների համար Մատակարարի կողմից սահմանվում է մեկ տարվա երաշխիքային ժամկետ: Երաշխիքային ժամկետի հաշվարկը սկսվում է Ապրանքների տեղակայման աշխատանքների ավարտի օրվանից:

5.3 Երաշխիքային ժամկետի ընթացքում Մատակարարը երաշխավորում է Ապրանքների որակի պահպանումը և համապատասխանությունը նմանատիպ ապրանքների որակի չափանիշներին:

5.4 Երաշխիքային ժամկետի ընթացքում Ապրանքների որակի չվերացվող թերությունների, ինչպես նաև այնպիսի թերությունների, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են

գալիս դրանք վերացնելուց հետո հայտնաբերելու դեպքում Գնորդը իրավունք ունի, իր ընտրությամբ՝

5.4.1 հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքների համար վճարված գումարը,

5.4.2 պահանջել փոխարինելու անպատշաճ որակի Ապրանքները կամ դրանց բաղադրամասերը համապատասխան որակի ապրանքով:

5.5 Մատակարարված սարքավորումների երաշխիքային սպասարկման ընթացքում Մատակարարը պարտավորվում է՝

5.5.1 Սարքավորումներում անսարքություններ առաջանալու մասին Գնորդի տեղեկացնելուց հետո երկու օրվա ընթացքում, կատարել անսարքության պատճառի հետազոտում:

5.5.2 Հնարավորության դեպքում կատարել անսարքության վերացում Գնորդի տարածքում:

5.5.3 3 (Երեք) աշխատանքային օրվա ընթացքում կատարել անհրաժեշտ վերանորոգման, սարքի կամ նրա մի մասի փոխարինման աշխատանքները Գնորդի տարածքում:

6 Կողմերի պատասխանատվությունը

6.1 Եթե Մատակարարը չի մատակարարել սույն պայմանագրով նախատեսված քանակի ապրանքը կամ էլ չի կատարել անորակ ապրանքը սահմանված ժամկետում պատշաճ որակի ապրանքով փոխարինելու՝ Գնորդի պահանջը, ապա Գնորդն իրավունք ունի չմատակարարված ապրանքները ձեռք բերել այլ անձանցից՝ ձեռքբերման հետ կապված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը վերագրելով Մատակարարին::

6.2 Մատակարարը, մատակարարման և տեղակայման աշխատանքների ավարտման ժամկետները խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Գնորդին վճարում է տույժ՝ Ապրանքի ընդհանուր գնի 0.1/զրո ամբողջ մեկ տասնորդական/ տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7 Վեճերի լուծման կարգը

7.1 Առաջացած վեճերը լուծվում են կողմերի երկուական ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

8.1 Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրի լրիվ կամ մասնակի չկատարման համար, եթե այդ չկատարումը հետևանք է այնպիսի հանգամանքների, ինչպիսիք են հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, պատերազմ, պետական հեղաշրջում, վթարներ, պատահարներ, որոնք դուրս են կողմերի վերահսկողությունից և կարող են որակավորվել որպես արտակարգ իրավիճակ, կամ այլ աղետներ:

8.2 Կողմերը իրավունք ունեն հրաժարվելու ամբողջ Պայմանագրից կամ նրա մասից, եթե ֆորս-մաժոր հանգամանքները տևում են 30 օրից ավել:

9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն վավերացնելու պահից և դադարում է Կողմերի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմամբ և ընդունման-հանձնման ակտի ստորագրությամբ:

9.2. Կողմերից յուրաքանչյուրը իրավասու է միակողմանի վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը մյուս կողմի սույն պայմանագրի պահանջների էական խախտման դեպքում:

9.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.4. Սույն պայմանագրով չկարգավորված Կողմերի հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9.5. Այն պայմանավորվածությունները, որոնք ձեռք են բերվել Կողմերի միջև Պայմանագրի կնքման նախնական փուլում, սակայն չեն ամրագրվել սույն պայմանագրում, համարվում են առոչինչ:

Կողմերի իրավաբանական հասցեները

Գնորդ	Մատակարար
ՀՀ ԱՆ ,Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտե ՓԲԸ	«ԴԻՎԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Երևան Կոմիտասի 49/4	ՀՀ, ք. Երևան, Նաիրի Զարյան 73/1
Հեռ.՝ 010 23-53-50	հեռ: 011 700041
h/h 163058101441 ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ, Արաբկիր մասնաճյուղ	“Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ” Բանկ Զեյթուն մ/ճ
ՀՎՀՀ 00011624	Հ/Հ 220300120106-000
	ՀՎՀՀ 01401885
Տնօրեն՝	Տնօրեն
Ալեքսանդր Բազարչյան	Ծիրունյան ..... Դ.

Հավելված 1.

Նախնական նախահաշիվ

	Անվանում	Քանակ	Գին	Գումար
1	Տեսախցիկ դրսի 2ՄՊ -HFW1200S	4	18333.33	73333.33
1	Տեսախցիկ ներսի 2ՄՊ -HDW1200R	4	17500.00	70000.00
2	Ձայնագրման սարք DVR - HCVR5108HS-S3	1	70833.33	70833.33
3	HDD 2TB	1	35000.00	35000.00
3	Մալուխ հոսանքի	600	250.00	150000.00
3	Սնուցման Աղբյուր 12V 20A	1	14166.67	14166.67
4	Տեղադրում	1	65833.33	65833.33
	Գումար			479166.67
	ԱԱՀ 20 %			95833.33
	Ընդամենը			575000

Տնօրեն

..... Ալեքսանդր Բազարչյան

Տնօրեն

..... Ծիրունյան